

**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՆԱՏՕ–Ի
ՌԱԳԻՈՏԵՂՈՐՈՇԻՉ
ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ
ԽՆԴՐԻ ՇՈՒՐԶ**

**ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՆԱՏՕ-Ի ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀՀՊ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇԻՉ ԿԱՅԱՆԻ
ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

2010 թ. նոյեմբերի 19–20–ը Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ–ի գագաթնաժողովում ընդունվեց դաշինքի նոր ռազմավարական հայեցակարգը, որով հավանություն տրվեց ՆԱՏՕ–ի եվրոպական միասնական հակահրթիռային պաշտպանության (այսուհետ՝ ՀՀՊ) համակարգի ստեղծմանը¹: Չնայած իր առաջ քաշված նախապայմաններին՝ Թուրքիան հավանություն տվեց և միացավ այդ ծրագրին: Իսկ նախապայմանների առաջադրումն ուղղակի մարտավարական հնարք էր, որով Թուրքիան փորձում էր մեծ հաշվով մեղմել հատկապես իրանական կողմի անհանգստությունն ու ի ցույց դնել տարածաշրջանային գործընթացներում իր «հետևողականությունը»: Այս առումով բավական հետաքրքիր էր փետրվարին ՆԱՏՕ–ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի հարցազրույցներից մեկում կատարած այն հայտարարությունը, որ Թուրքիան ինքն է ցանկացել, որ ՆԱՏՕ–ի հակահրթիռային պաշտպանության (այսուհետ՝ ՀՀՊ) տարրեր տեղակայվեն իր տարածքում²:

2011 թ. սեպտեմբերի 2–ին Թուրքիայի ԱԳՆ–ն տարածեց հաղորդագրություն այն մասին, որ Թուրքիայի տարածքում նախատեսվում է տեղակայել ՆԱՏՕ–ի ՀՀՊ ռադիոտեղորոշիչ կայան (այսուհետ՝ ՌՏԿ)³: Սեպտեմբերի 14–ին Թուրքիան ու ԱՄՆ–ն

¹ Missile Defense and NATO's Lisbon Summit, <http://fpc.state.gov/documents/organization/154176.pdf>.

² Füzle kalkanını Türkiye istemiş!, Radikal, 11.02.2012.

³ NATO, Türkiye'ye radar kuracak, <http://www.cnnturk.com/2011/turkiye/09/02/nato.turkiyeye.radar.kuracak/627953.0/index.html>.

ստորագրեցին հուշագիր թուրքական տարածքում ՌՏԿ-ի տեղակայման մասին⁴: Թուրքական ՋԼՄ-ների համաձայն՝ 2011 թ. վերջին արդեն ՌՏԿ-ն տեղակայվել է Քյուրեջիքում և 2012 թ. հունվարից սկսել գործել⁵:

ՆԱՏՕ-ի եվրոպական ՀՀՊ համակարգին Թուրքիայի մաս կազմելը վերջին տարիների ՆԱՏՕ-Թուրքիա ռազմաքաղաքական համագործակցության ամենակարևոր և էական քայլերից էր: Թուրքիայի միանալն այդ համակարգին և նրա համաձայնությունն իր տարածքում տեղակայելու ռադիոտեղորոշիչ կայան, կարելի է համարել վերջին 10 տարվա ժամանակահատվածում ամենակարևոր զարգացումը: Հարկ է նկատել, որ վերջին տարիներին ինչպես ՆԱՏՕ—Թուրքիա համագործակցությունը, այնպես էլ ԱՄՆ—Թուրքիա հարաբերությունները թևակոխել էին որոշակի անվստահության հարթություն: Հատկապես ՆԱՏՕ-ի ու Անկարայի միջև հարաբերությունների խաթարման առումով էական դարձավ իրաքյան պատերազմը, երբ 2003 թ. մարտին Թուրքիան մերժեց ՆԱՏՕ-ին՝ իր տարածքն օգտագործել Իրաքի դեմ պատերազմում: 2003 թ. հուլիսին Իրաքի Սուլեյմանիյա քաղաքում ամերիկյան ուժերի կողմից թուրքական հատուկ նշանակության ուժերի 11 զինծառայողների կալանավորման դեպքը Թուրքիայի ՋՈՒ ԳՇ պետ Հ. Օզքյոքը բնորոշեց որպես թուրքական և ամերիկյան ՋՈՒ-ի միջև վստահության ճգնաժամ՝ նշելով, որ չի կարծում, թե դա ուղղակի տեղային մի միջադեպ է: Այդ իրադարձությունները, չնայած կային ավելի խորքային պատճառներ, շրջադարձային էին ինչպես թուրք-ամերիկյան հարաբերությունների, այնպես էլ թուրքական ռազմաքաղաքական դեկավարության նոր ռազմաքաղաքական հայեցակարգի ու մոտեցումների որդեգրման առումով: 2008 թ. օգոստոսի վրաց-ռուսական պատերազմից հետո թուրքական կողմը մերժեց ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի ռազմածովային ուժերին Վրաստանին մարդասիրական օգնություն տրամադրելու նպատակով սևծովյան նեղուցներով Սև ծով մտնել:

Տարբեր փորձագետներ ու վերլուծաբաններ, իրենց ուսումնասիրություններում վերջին տարիների Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության հետ կապված, նշել են, որ Անկա-

⁴ Turkey, US sign agreement on NATO radar deployment, <http://www.todayszaman.com/news-256744-turkey-us-sign-agreement-on-nato-radar-deployment.html>

⁵ NATO radar system in Turkey up, running, <http://www.hurriyetdailynews.com/nato-radar-system-in-turkey-up-running.aspx?PageID=238&NID=11474&NewsCatID=338>

րայի ռազմաքաղաքական շահերն այլևս չեն համընկնում ինչպես ԱՄՆ–ի, այնպես էլ ՆԱՏՕ–ի հետ: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը միտված էր որոշակիորեն հավասարակշռելու ՆԱՏՕ–ի հետ իր հարաբերություններն՝ այլ ուժային կենտրոնների հետ հարաբերությունների զարգացմամբ:

Լիսաբոնյան գագաթնաժողովն ու եվրոպական ՀՀՊ համակարգին Թուրքիայի միանալը ցույց տվեցին, որ չնայած Անկարայի անկախ արտաքին քաղաքականության փորձերին, այդ երկիրը դեռևս գտնվում է ինչպես ԱՄՆ–ի, այնպես էլ ՆԱՏՕ–ի ռազմաքաղաքական ազդեցության տակ և, համենայն դեպս, չի կարող էականորեն շեղվել նրանց իսկ ռազմաքաղաքական ուղեգծից: Ակնհայտ է, որ այս քայլով Թուրքիան մի շարք կարևոր «փոխհատուցումներ» է ստացել նրանցից: Անկարան իր արևմտյան դաշնակիցներին հասկացրել է, որ եվրոպական ՀՀՊ–ին միանալով, կարող է լուրջ խնդիրներ ունենալ Ռուսաստանի ու հատկապես Իրանի հետ, այդ համատեքստում գնում է «բավական վտանգավոր քայլի», ուստի դրա դիմաց պետք է Թուրքիան փոխհատուցվի: Վերջին ամիսների թուրք–ամերիկյան հարաբերությունների դինամիկան, մերձավորարևելյան տարածաշրջանում թուրքական ակտիվությունը վկայում են այն մասին, որ Թուրքիան Արևմուտքի, հատկապես ԱՄՆ–ի կողմից ստացել է գործողությունների որոշակի ազատություն: Եթե դիտարկում ենք վերջին շրջանում Թուրքիայի գերակտիվությունը՝ նրա ներգրավվածությունը մերձավորարևելյան զարգացումներում, նկատում ենք, որ Թուրքիայի հիմնական նպատակը Մերձավոր Արևելքում որոշում կայացնող տերության կարգավիճակի ձեռքբերումն է: Իր հետապնդած շահերն ու նպատակները Թուրքիան փորձում է զուգորդել Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ–ի և ՆԱՏՕ–ի շահերի հետ՝ միևնույն ժամանակ փորձելով օգտագործել տարածաշրջանում վերջիններիս լծակները: Որոշակի լծակներ, թելադրանքներ կամ հավանություններ ստանալով Արևմուտքից՝ Թուրքիան փորձում է առաջ տանել իր աշխարհաքաղաքական խաղը:

Թուրքիան, իր տարածքում ՀՀՊ ՌՏԿ–ի տեղակայման հետ կապված, դժվարին կացության մեջ հայտնվեց Վաշինգտոն—Մոսկվա—Թեհրան եռանկյունու հետ իր հարաբերություններում: Այն փորձում է խուսանավել այդ հարաբերություններում: Չնայած թուրքական իշխանությունների հավաստիացումներին՝ ակնհայտ է, որ այդ համակարգերն առաջին հերթին պայմա-

նավորված են իրանական գործոնով, քանի որ այլ հավանական սպառնալիք այդ առումով չկա: Ռուսական և իրանական կողմերն արդեն հայտնել են իրենց անհանգստությունները, և Թուրքիան ստիպված է բացատրություններ ու հստակ երաշխիքներ տալ, սակայն դժվար թե Անկարան համոզիչ կարող է լինել: Պատահական չէ նաև այն, որ իրանական կողմի պաշտոնական հայտարարություններից հետո թուրք-իրանական սահմանին նախաձեռնվել են լայնամասշտաբ ռազմաօդային զորավարժություններ, ինչը կարելի է դիտարկել որպես Իրանի անհանգստության ու զգոնության ուղերձի դրսևորում: Ակնհայտ է, որ Թուրքիան Իրանի համար տարածաշրջանում չի հանդիսանում վստահելի գործընկեր, իսկ ռուս-թուրքական հարաբերությունները պայմանավորված են առավելապես տնտեսական շահերով, որոնց հարաբերություններում կան խորքային հակասություններ ու աշխարհաքաղաքական մրցակցություն: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է և, չնայած այդ երկրի ռազմաքաղաքական ինքնուրույնության փորձերին, այդ երկիրը դեռևս գտնվում է Արևմուտքի ռազմաքաղաքական ազդեցության տակ և էապես չի կարող շեղվել դրանից:

ՆԱՏՕ-ի ՀՀՊ համակարգին միանալուց և հատկապես թուրքական տարածքում ՌՏԿ-ի տեղակայման համաձայնությունից հետո թուրք-ամերիկյան ռազմական համագործակցությունը որոշակի զարգացման միտումներ սկսեց ցույց տալ: Թուրքիան դեռևս ռազմական տեխնոլոգիաների ու սպառազինության ձեռքբերման հարցում զգալիորեն կախված է ԱՄՆ-ից, ուստի թուրքական կողմը ամերիկյան նոր սպառազինության ձեռքբերման խնդիրներ բարձրացրեց:

Արդեն իսկ հոկտեմբերին թուրքական ՋԼՄ-ներում հայտնվեցին տեղեկություններ, որ Թուրքիան մի քանի կարևորագույն սպառազինության տեսակների հարցով դիմել է ԱՄՆ-ին: Ըստ «Hürriyet Daily News»-ի՝ Թուրքիայի տարածքում ՆԱՏՕ-ի միասնական հակահրթիռային պաշտպանության համակարգի՝ ՌՏԿ-ի տեղակայումը նոր խթան կհանդիսանա Թուրքիային արդիական սպառազինությամբ մատակարարելու համար: Դրա տեղակայման որոշումն սկսել է օգուտներ տալ Թուրքիային ժամանակակից ամերիկյան սպառազինության ձեռքբերման համար, և ԱՄՆ-ն այս համատեքստում խոստացել է այդ երկրին տալ արդիական «H-1W Super Cobra» ռազմական ուղղաթիռներ՝

քուրդ զինյալների դեմ պայքարի համար⁶: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանը սեպտեմբերի 30-ին հայտարարել էր, որ ամերիկյան կողմը համաձայնել է Թուրքիային փոխանցել 3 միավոր «Super Cobra» ռազմական ուղղաթիռ: Թուրքիայի մի շարք ռազմական վերլուծաբաններ համարել են, որ այդ քայլը որոշակի «պարզատրություն» է Թուրքիային՝ իր տարածքում ՌՏԿ-ի տեղակայման որոշումն ընդունելու կապակցությամբ, սակայն համարում են, որ դա դեռևս շատ քիչ է՝ համեմատած Թուրքիայի ռիսկերի հետ: Նրանք ակնկալում էին, որ ամերիկյան կողմն ավելի «արդյունավետ» քայլեր իրականացնի ժամանակակից ռազմական տեխնիկայի մատակարարման առումով:

Սեպտեմբերին ամերիկյան «The Washington Post» պարբերականը գրեց, որ ԱՄՆ-ի վարչակազմը քննարկում է Թուրքիային կիրառման նպատակով ամերիկյան «Predator» անօդաչու թռչող սարքերի տրամադրման հարցը՝ ՔԲԿ-ի զինյալների դեմ պայքարում՝ նշելով, որ Թուրքիան ներկայում ամենաշատը հենց նման համակարգերի կարիքն ունի⁷: Արդեն նոյեմբերին թուրքական ՋԼՄ-ները տեղեկատվություն տարածեցին, որ 4 միավոր «Predator» ԱԹՄ-ները Իրաքից փոխադրվել են Թուրքիա՝ տեղակայվելով Ինջիրլիքի ռազմաբազայում⁸: Ըստ ամերիկյան ու թուրքական ՋԼՄ-ների՝ Թուրքիան ցանկանում է ԱՄՆ-ից ձեռք բերել նաև «Reaper» ժամանակակից հարվածային ԱԹՄ-ներ, որոնք իրենց հնարավորություններով ու սպառազինվածությամբ զգալիորեն գերազանցում են «Predator»-ներին:

Նոյեմբերին հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ն համաձայնել է Թուրքիային փոխանցել «F-16» ռազմական ինքնաթիռների ծրագրային ապահովման ծածկագրերը, ինչն աննախադեպ քայլ էր, քանի որ ԱՄՆ-ն մինչև օրս ոչ մի երկրի չի տրամադրել դրանք⁹: Թուրքական կողմը սրանով իսկ հնարավորություն է ստանում իր ՌՕՈՒ-ի «F-16» ինքնաթիռներին ինքնուրույն հարմարեցնելու սեփական արտադրության սպառազինությունն ու կրակի կառավարման համակարգերը, և հենց այդ գործում էլ կներգրավվի թուրքական «Aselsan» ռազմաարդյունաբերական ընկերությունը:

⁶ Radar deal triggers benefits in weaponry for Turkey, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=radar-deal-triggers-benefits-in-weaponry-for-turkey-2011-10-09>

⁷ U.S. considering Ankara's request to base Predators in Turkey to fight a Kurdish group in northern Iraq, http://www.washingtonpost.com/world/national-security/us-considering-ankaras-request-to-base-predators-in-turkey-to-fight-a-kurdish-group-in-northern-iraq/2011/09/09/gIQA5R1fIK_story.html

⁸ 'Predator'lar görecek ama vurmayacak, Radikal, 15. 11. 2011

⁹ F-16 kodlari Türkiye'ye verilecek, Bugün, 13. 11. 2011

Բացի այդ՝ թուրքական կողմը կարող է արդեն ստանձնել այլ երկրների վերոնշյալ ինքնաթիռների արդիականացման գործը, ինչպես, օրինակ՝ Պակիստանի:

Վերջին շրջանում ԱՄՆ-ի կողմից ժամանակակից սպառազինության մատակարարումն ու ռազմական համագործակցության զարգացման միտումներն առաջին հերթին Թուրքիայի տարածքում ռադարի տեղակայման համաձայնության «պարզևատրում էր» թուրքական կողմին:

Ռազմական առումով Թուրքիայի տարածքում նման գերժամանակակից ՌՏԿ-ի տեղակայումը նաև Թուրքիայի պաշտպանական հնարավորությունների մեծացմանն ուղղված քայլ է: Թուրքական ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության մեջ նշված էր, որ այդ համակարգի տեղակայումը նպաստելու է ինչպես Հյուսիսատլանտյան դաշինքի, այնպես էլ ազգային պաշտպանական համակարգի հզորացմանը: Մինչև հիմա թուրքական բանակում մարտական հերթապահության մեջ չկան մեծ հեռահարության հակաօդային պաշտպանության (այսուհետ՝ ՀՕՊ) և ՀՀՊ համալիրներ: Ներկայումս Թուրքիայի օդային տարածքը հսկում են փոքր հեռահարության «Rapier», «Stinger», սեփական արտադրության Atilgan, միջին հեռահարության արդիականացված «I-Hawk», «Nike Hercules» ՋՀՀ-ները¹⁰: Սեփական ՀՕՊ հեռահար համակարգի ստեղծման ուղղությամբ 2006 թ. հունիսին վարչապետ Ռ. Թ. Էրդողանի նախագահությամբ գումարված Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց երկրի ՀՕՊ-ն ուժեղացնելու համար սկսել արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը: Թեև դեռևս վերջնական որոշում չի կայացվել, այդուհանդերձ արդեն ակնհայտ է, որ ռուսական կամ չինական համալիրների ձեռքբերումը Թուրքիայի կողմից քիչ հավանական է, քանի որ նաև տեխնիկական մասով ինտեգրացված դաշտում գործելու հետ կապված խնդիրներ կառաջանան: Թուրքիան արդեն իսկ չի կարող անտեսել ամերիկյան համալիրները, և Թուրքիայի տարածքում ՌՏԿ-ի տեղակայումից հետո, ամենայն հավանականությամբ, թուրքական ընտրությունը կկանգնի հենց ամերիկյան տարբերակների վրա: Բացի այդ՝ առկա է նաև քաղաքական գործոնը: Դեռևս հուլիսին թուրքական ՋԼՄ-ները տեղեկատվություն հրապարակեցին, որ ՆԱՏՕ-ն զգուշացրել է Թուրքիային՝

¹⁰ The Military Balance 2009, IISS, Published by Routledge, London 2009, pp. 155-157.

ձեռնպահ մնալ ռուսական կամ չինական համալիրների ձեռքբերումից, հակառակ պարագայում՝ ՆԱՏՕ-ն կխուսափի Թուրքիայի հետ կիսել բալխստիկ հրթիռների հետ կապված հետախուզությունը, եթե վերջինս սեփական հակաօդային ու հակահրթիռային պաշտպանության համար ընտրություն կատարի ռուսական կամ չինական համակարգերի միջև¹¹: Արևմուտքի մի շարք պաշտոնյաներ ու փորձագետներ նշում են, որ ռուսական կամ չինական ՀՕՊ համալիրներն անհամատեղելի են ՆԱՏՕ-ի համակարգի հետ, ուստի նրանք կգործեն առանձին և չեն միացվի ՆԱՏՕ-ի միասնական համակարգին: Չնայած Արևմուտքի հորդորներին ու նաև ճնշումներին՝ Թուրքիան հրաժարվել է սեփական ՀՕՊ համակարգի համար հայտարարված մրցույթից հանել ռուսական ու չինական ընկերություններին:

Թուրքիայում տեղակայված «AN/TPY-2» ՌՏԿ-ն ունի է 2000 կմ դիտարկման շառավիղ և հնարավորություն ունի վերահսկելու ինչպես Թուրքիայի ողջ տարածքը, Իրանի տարածքի զգալի մասը, այնպես էլ Հարավային Կովկասը, Ռուսաստանի հարավային շրջանները, Կենտրոնական Ասիայի արևմտյան հատվածը, Մերձավոր Արևելքի մի որոշ հատվածը: Այն կարող է իրականացնել հետախուզում, տեղորոշում և տեղեկատվության փոխանցում ՀՀՊ այլ բաղադրիչների: Մալաթիայի Քյուրեջիք շրջանում տեղակայված ՌՏԿ-ն իրանական սահմանից գտնվում է մոտ 500-600 կմ հեռավորության վրա: Իրանը ներկայում իր սպառազինության մեջ ունի մեծ քանակությամբ օպերատիվ-մարտավարական հրթիռներ, որոնք կարող են հասնել մինչև Մալաթիա և Դիարբեքիր: Դիարբեքիրում են տեղակայված թուրքական ՌՕՈՒ-ի 2-րդ մարտավարական հրամանատարությունը և խոշոր ավիացիոն ռազմաբազան: Իրանի նկատմամբ ռազմական գործողությունների պարագայում առաջնային հրթիռային հարվածի տակ են հայտնվելու Պարսից ծոցում, Թուրքիայում և արաբական մի շարք երկրներում գտնվող ամերիկյան ռազմաբազաներն ու ռազմական ենթակառուցվածքները: Թուրքիայի տարածքում գտնվող ՌՏԿ-ն Իրանի կողմից ռազմական հակահարվածի առաջնային թիրախներից է դառնալու: Թուրք փորձագետները այս առումով նշել են, որ Իրանի կողմից խմբային հրթիռարձակումների պարագայում բավական դժվար կլինի որսալ բոլորը, մասնավորապես հաշվի առնելով

¹¹ NATO warns Turkey against buying Chinese, Russian air defense systems, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=nato-warns-turkey-against-buying-chinese-russian-air-defense-systems-2011-07-25>

այն, որ կալանիչ հրթիռները տեղակայվելու են հիմնականում միջերկրածովյան շրջանում:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի կարևոր անդամներից է և դաշինքի կողմից դեռևս կարևորվում է այդ երկրի աշխարհաքաղաքական նշանակությունը: ՆԱՏՕ-ի ՀՀՊ ծրագրին մաս կազմելն ու իր տարածքում ՌՏԿ համակարգի տեղակայումը կբարձրացնեն Թուրքիայի ռազմաքաղաքական նշանակությունը թե՛ դաշինքի և թե՛ ԱՄՆ-ի համար: Բացի այդ՝ այսուհետ թուրք-ամերիկյան ռազմական համագործակցությունն ավելի կզարգանա, և Թուրքիան կօգտվի ամերիկյան նորագույն սպառազինության մատակարարումներից: Այս գործարքով Թուրքիան իր տարածաշրջանային քաղաքականության մեջ ստացել է ռազմաքաղաքական հավակնությունների իրագործման ու գործողությունների որոշակի «ազատություն»: